

Մասնակցության պայմաններ

- Նախագծին կարող են մասնակցել միայն Բանկի հաճախորդ հանդիսացող այն բոլոր կազմակերպությունները, որոնք ներկայացնում են հայկական արտադրանք:
- Ապրանքատեսակները պետք է նվազագույնը ներկայացված լինեն հայկական շուկայում, ունենան բրենդավորում (անվանում, լոգո) և լինեն փաթեթավորված:
- Արտադրանքները ներկայացվում են Բանկի մասնաճյուղերում տեղադրված համապատասխան ցուցափեղկերում, ինչպես նաև կարող են լուսաբանվել մամուլում:
- Եթե ներկայացվող արտադրանքի արժեքը գերազանցում է 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամը, ապա ապրանքատեսակները հանձնելիս ստորագրվում է հանձման-ընդունման ակտ գործընկեր կազմակերպության և Բանկի միջև:
- Կազմակերպությունը պարտավորվում է տրամադրել իր այցեքարտերը և թռուցիկները (սպառվելու դեպքում պետք է համալրվեն նորերով), որտեղ նվազագույնը պետք է նշված լինեն կազմակերպության կոնտակտային տվյալները, գործունեության հասցեն, տարբերանշանը/լոգոն:
- Կազմակերպությունը պետք է տրամադրի գործունեության մասին հակիրճ նկարագրություն (հիմնադրման պատմություն, արժեքներ և այլ նշանակալի փաստեր)՝ ցուցափեղկում տեղադրելու նպատակով:
- Ապրանքատեսակները կարող են ներկայացվել մասնաճյուղերում մինչև 1 տարի ժամկետով՝ կախված արտադրանքի տեսակից և ժամկետայնությունից: Ցանկության դեպքում ապրանքատեսակների ցուցադրության շարունակությունը կարող է քննարկվել:
- Արտադրանքները ենթակա են վերադարձման՝ ցուցադրության ժամկետի լրանալուց հետո: